

ՊԱՇՏՈՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ

ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԺԱՄԿԵՏ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ

Առաքվող քարտերի գործընթացի

կազմակերպման մասնագետ

Կես դրույք

ք. Երևան, ՀՀ

Հնարավորինս շուտ

Օգոստոսի 29, 2022թ.

Սեպտեմբեր 16, 2022թ.

Անորոշ՝ 3 ամիս փորձաշրջանով

«Այդի Բանկ» ՓԲԸ-ն փնտրում է մոտիվացված և խելացի թիմի անդամի, ով կմիանա թիմին որպես Առաքվող քարտերի գործընթացի կազմակերպման մասնագետ:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Պլաստիկ քարտերի վարչությունից քարտերի ստացում,
- Տվյալ կամ հաջորդ օրվա առաքվող քարտերի ցանկի պատրաստում,
- Հեռախոսազանգերի կենտրոնի աշխատակիցների կողմից ստացված նամակների պատասխանի տրամադրում, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում առաջացած խնդիրների լուծում,
- Վերադարձված քարտերի տվյալներին փոխանցում Հեռախոսազանգերի կենտրոն,
- Վերադարձված, սակայն կրկին առաքման կամ մասնաճյուղ ուղարկվող քարտերի տեսակավորում, նոր ծրարների պատրաստում, ծրարավորում և տրամադրում մասնաճյուղերին,
- Ոչնչացման ենթակա քարտերի ցանկի պատրաստում և փոխանցում Պլաստիկ քարտերի վարչություն:

ՊԱՅԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Բարձրագույն կրթություն, վերջին կուրսի ուսանող
- Ֆինանսաբանկային ոլորտում փորձը կոիտվի որպես առավելություն
- Համակարգչային գիտելիքներ
- Հաղորդակցման հմտություններ
- Ընդհանուր զարգացվածություն և հետաքրքրասիրություն
- Թվային մտածողություն
- Եռլտապահություն և պատասխանատվության զգացում
- Կազմակերպչական հմտություններ
- Փոփոխություններին արագ արձագանքելու կարողություն

- Մանրութների նկատմամբ ուշադրություն / լարված գրաֆիկով աշխատելու կարողություն
- Խնդիրների արագ և արդյունավետ լուծման կարողություններ
- Թիմում արդյունավետ աշխատելու ունակություն
- Գործարար էթիկայի նորմերի իմացություն և դրանց կիրառում:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձաշրջանի բարեհաջող ավարտից հետո Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է արտոնությունների լայն փաթեթ, մասնավորապես, բժշկական ապահովագրություն, պարգևատրման ճկուն համակարգ, սպորտային ակումբների ծառայություններից օգտվելու կորպորատիվ փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ և այլն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եթե Ձեր գիտելիքները, մասնագիտական փորձը և որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին, ապա խնդրում ենք Ձեր ինքնակենսագրականն ուղարկել hr@idbank.am էլ.փոստի հասցեին՝ մինչև հայտարարության վերջնաժամկետը՝ վերնագիր (subject) տողում պարտադիր նշելով հաստիքի անվանումը: Հարցազրույցի կիրավիրվեն նախնական ընտրությունն անցած դիմորդները:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Այդի Բանկ»-ը հիմնադրվել է 1990թ.-ին «Անելիք Բանկ» անվանումով, իսկ 2018թ. Հունիսի 4-ից Բանկը ներկայանում է «Այդի Բանկ» ՓԲԸ անվանումով:

«Այդի Բանկ»-ի առաքելությունն է հաճախորդների համար լինել առաջին ընտրության լավագույն Նորար Բանկ՝ հաճախորդներին տրամադրելով անհատական մոտեցմամբ արդիական թվային լուծումներ: Բանկի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքէջ <https://www.idbank.am/>: